ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՏԴ 338.467

Միրզոյան Արթուր
ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գլխավոր մասնագետ
ss_mir99@mail.ru[*]

Միրզոյան Սիլվա
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ավագ դասախոս
Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
ss_mir99@mail.ru

Աշխարհում տնտեսությունների թվայնացումը լայն տարածում է ստանում: Այդ ամենը պահանջում է գործողություններ իրականացնել, որպեսզի Արցախի Հանրապետությունը հետ չմնա աշխարհի երկրների տնտեսությունների թվայնացումից: Թվային տնտեսությունը հանդիսանում է աճի և զարգացման հիմնական շարժիչներից: Նա կարող է բարձրացնել տնտեսության տարբեր հատվածների մրցունակությունը, տրամադրել բիզնեսին և ձեռներեցներին նոր հնարավորություններ: Թվային տնտեսությունը բնութագրվում է նոր հնարավորություններով, որոնք դրական են արտացոլվում մարդկանց կյանքի վրա: Երկիրները ձգտում են օգտագործել թվային հնարավորությունները, ակնկալելով, որ այդ ամենը կնպաստի տնտեսական զարգացմանը: Թվային զարգացման ռազմավարությունը պետք է ընդգրկի ներդրումների թվային ենթակառուցվածքներում: Տնտեսության թվայնացումը նպաստում է նաև կորոնավիրուսի տնտեսական հետևանքների արագ հաղթահարմանը և առավել արդիական է դառնում համաճարակի ակտիվացման ժամանակ:

Հոդվածում քննարկվել են ոլորտի զարգացման համար կարևոր հիմնախնդիրները և զարգացման ուղղությունները: Կարևորվել է հասարակության ներգրավմամբ տնտեսության թվայնացման ռազմավարության և ծրագրերի մշակման ու իրականացման անհրաժեշտությունը: Ուսումնասիրվել են տնտեսության թվայնացման ներկա վիճակը և արդյունավետության բարձրացման հետ կապված հիմնախնդիրները:

Բանալի բառեր՝ թվային տնտեսություն, թվային տեխնոլոգիաներ, թվային ենթակառուցվածքներ, թվային նորարարություններ, թվային հարթակ, թվային էկոհամակարգ, ինտերնետ-բանկինգ:

---

[*] Հոդվածը ներկայացվել է 25.07.2022:
Տպագրության է երաշխավորել տ.գ.թ., դոցենտ Դ.Աղաջանյանը 08.08.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 19.08.2022:

Ներածություն

Աշխարհը մտել է թվային տեխնոլոգիաների զարգացման դարաշրջան: Արցախի Հանրապետությունը զերծ չի կարող մնալ այդ զարգացումներից:

Լայն տարածում է ստանում թվային տվյալների հավաքագրումը, պահպանումը, մշակումը, որոնումը, փոխանցումը և ներկայացումը:

«Թվային տնտեսություն» տերմինն առաջին անգամ օգտագործվել է 1995 թվականին Դոն Տապսկոտտի «Թվային տնտեսություն. խոստումը և վտանգը ցանցային ինտելեկտի դարաշրջանում» գրքում[1]: Թվային տնտեսությունը տնտեսության մաս է, որում արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները ենթարկվել են թվային վերափոխումների՝ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ: Թվային տնտեսությունը ունի դրական և բացասական կողմեր: Դրականը կայանում է մասնավորապես նրանում, որ հաղթահարվում են սոցիալական անհահավասարությունը, աճում է արտադրողականությունը, ստեղծվում են աշխատատեղեր, իջնում են արտադրության ծախսերը: Բացասականը՝ մարդկանց թվային գրագիտության անհավասարությունը, հակերների վտանգը, անձնական տվյալների մուտքագրումը համացանց, որը կարող է օգտագործվել նպատակ հետապնդելով ազդել իրենց պահելաձևի վրա:

Թվային տնտեսության զարգացման ուղղություններով սահմանվում են նախաձեռնությունների մշակման և նախագծերի իրագործման ընդհանուր մոտեցումները՝ թվային փոխակերպումների իրականացման և թվային ենթակառուցվածքների զարգացման համար:

Թվային տնտեսության զարգացման ուղղություններն են տնտեսության ճյուղերի թվային փոխակերպումը, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շուկաների թվային փոխակերպումը, ինտեգրացիոն գործընթացների կառավարման պրոցեսների թվային փոխակերպումը, թվային ենթակառուցվածքի ձևավորումը և զարգացումը ու թվային գործընթացների պաշտպանվածության ապահովումը:

Թվային տնտեսության մեջ դրամայնացման հիմնական աղբյուրներն են թվային հարթակներն ու թվային ռեսուրսները:

Թվային հարթակը միջոցների համակարգ է, որը նպաստում է թվային էկոհամակարգի՝ զգալի քանակությամբ սուբյեկտների կողմից թվային գործընթացների, ռեսուրսների և ծառայությունների օգտագործմանը և ապահովում է դրանց անխափան փոխգործակցության հնարավորությունը:

Թվային հարթակները միջանցիկ գործընթացների հիման վրա տեխնոլոգիական գործունեության զարգացման հիմնական տարերն են, ինչը ենթադրում է տարբեր ավանդական և նոր ճյուղերում, միևնույն թվային հարթակում, միևնույն թվային պատկերների (օբյեկտների) շուրջ գործունեություն ծավալող շահագրգիռ մասնակիցների ներգրավում:

Շուկաների թվային փոխակերպման ընթացքում գործարար միջավայրը պետք է սպառողների և արտադրողների համար ապահովի ծախսերի նվազեցում, միջնորդների

[1] Tapscott D. The Digital Economy: Promise and Peril in the Age of Networked Intelligence (1994) //Paperback, 1994.-p. 368.

թվի, նոր շուկաներ դուրս գալուն խոչընդոտող գործոնների կրճատում, ինչպես նաև բիզնեսի և քաղաքացիների համար «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցական ցանցի օգտագործման միջոցով ծառայություններ ստանալու նոր հնարավորություններ: Անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր պայմաններ՝ թվային նախաձեռնությունների իրագործման համար:

Մինչև 2021թ. հունվարի 1-ը «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ն Արցախի հանրապետության միակ ինտերնետ-ծառայություններ մատուցող օպերատորն էր: Գործունեությունն սկսել է 2002թ. փետրվարից: Ընթացքում ներդրվեց օպտիկա-մանրաթելային համակարգը, ինչը առաջընթաց էր Արցախի կապի շուկայում և բնակավայրերի 95%-ն ունեցան համացանցից օգտվելու հնարավորություն:

Տարիների ընթացքում զարգացում ապրեց ոչ միայն առկա ցանցը, այլև տեխնոլոգիաները և այսօրվա դրությամբ ունենք նաև շարժական ինտերնետ:

2013թ. թողարկվեց երրորդ սերնդի (3G) շարժական համացանցի համակարգը և ընկերությունը պատրաստվում էր մոտավորապես 15.0 մլն դոլարի ներդրում ևս կատարել, որպեսզի 3G համակարգի հզորությունը բարձրացվի շուրջ 10 անգամ և լուծվեն ցանցերում առկա մի շարք տեխնիկական խնդիրներ:

Բացի վերը նշվածից, թվային տնտեսության ներդրման ու զարգացման պարագայում, անհրաժեշտություն է առաջանում չորրորդ (4G, 4G+, 5G) և արդի նոր սերունդների շարժական համացանցի համակարգի ներդրման ու սակագնային քաղաքականության վերանայման համար, իջեցնելով սակագների արժեքը և բարձրացնելով սպասարկման մակարդակը ու համացանցի արագությունը:

2021թ. հունվարից Արցախի Հանրապետությունում նաև գործունեություն է իրականացնում Վիվա-ՄՏՍ-ը: Ընկերությունը իր առջև նպատակ էր դրել հնարավորինս սեղմ ժամկետներում բջջային ընդարձակ ցանց ապահովել ամբողջ հանրապետությունում ու սկսել ծառայություններ մատուցել: Վիվա-ՄՏՍ-ը միանգամից ներ է դրել չորրորդ սերնդի 4G/LTE շարժական գերարագ համացանցի համակարգ, նոր դարաշրջանի սկիզբ ազդարարելով Արցախի հեռահաղորդակցության ոլորտում: Այն բաժանորդներին հնարավորություն է տալիս օգտվելու ինտերնետի անհամեմատ ավելի բարձր արագությունից և աշխատելու առավել բարձր արդյունավետությամբ: Վիվա-ՄՏՍ-ի մուտքով հանրապետությունում ավարտվեց բջջային կապի մենաշնորհը, սկիզբ առավ մրցակցությունը: Վիվա-ՄՏՍ-ը հանդիսանում է ԱՊՀ տարածքում հեռահաղորդակցության խոշորագույն ընկերություններից մեկի՝ ռուսաստանյան «Մոբիլնիյե Տելեսիստեմի» («ՄՏՍ») ընկերության դուստր ընկերությունը:



Նկ. 1 Ինտերնետ հասանելիության բաժանորդների կառուցվածքն ըստ շրջանների, 2019թ. հունվարի 1-ի դրությամբ[1]

Բաժանորդների ինտերնետ հասանելիությունը շրջաններում 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ցույց է տալիս, որ բաժանորդների 46.1 %-ը կենտրոնացված են Ստեփանակերտ քաղաքում, Մարտունի քաղաքում 14.1 %, Մարտակերտ քաղաքում 14.0 % (նկ. 1): Այդ ամենը խոսում է շրջանների ինտերնետ հասանելիության ենթակառուցվածքների ձևավորումից ընդլայնման և հուսալիության բարձրացման անհրաժեշտության մասին:

Աղյուսակ 1
Ինտերնետ հասանելիության բաժանորդներ[2]

	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ /միավոր/
Ինտերնետ հասանելիության բաժանորդներ	19883	24468	24872	26511	29135	31427	32835
այդ թվում՝ բնակարանային բաժանորդներ	18417	22867	23260	24639	26938	28845	30062

Ինտերնետ հասանելիության բաժանորդները 2020թ. ի համեմատ 2014թ. հետ աճել է 1.6 անգամ (աղ. 1): Ամեն տարի բաժանորդների թվաքանակի աճ է արձանագրվել, ինչը վկայում է մեծ պահանջարկի առկայության մասին:

[1] ԱՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Արցախի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-դեկտեմբերին (2019) //ք.Ստեփանակերտ, 2019.- էջ 32:
[2] http://stat-nkr.am/files/publications/2020/Doklad_2020_hunvar_dektember/1_2_5kap% 20(32-33).pdf

Աղյուսակ 2

Ինտերնետ հասանելիության բաժանորդների դինամիկան, %[1]

	2015թ.-ը 2014թ. նկատմամբ, %	2016թ.-ը 2015թ. նկատմամբ, %	2017թ.-ը 2016թ. նկատմամբ, %	2018թ.-ը 2017թ. նկատմամբ, %	2019թ.-ը 2018թ. նկատմամբ, %	2020թ. սեպտեմբերի 1-ը 2019թ. նկատմամբ, %
Ինտերնետ հասանելիության բաժանորդներ	123.1	105.3	106.6	109.9	107.9	104.5
այդ թվում՝ բնակարանային բաժանորդներ	124.2	105.4	105.9	109.3	107.1	104.2

2015թ. ինտերնետ հասանելիության բաժանորդների 23.1% աճը պայմանավորված է օպտիկա-մանրաթելային համակարգի ներդրման հետ, ինչը առաջընթաց էր Արցախի կապի շուկայում և ավելի շատ բնակավայրեր հնարավորություն ունեցան համացանցից օգտվելու, որը ապահովեց հետագա տարիներին բաժանորդների տարեկան միջինը 7% աճ և հիմնական մասը կազմում են բնակարանային բաժանորդները (աղ. 2):

Արցախում թվայնացման աշխատանքների պետական մակարդակով իրագործման առաջին քայլերից էր Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով 2021թ. հունիսի 16-ին Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Թվայնացման գործակալություն» առանձնացված ստորաբաժանման ստեղծելը, որն պետք է ապահովի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի և տնտեսության թվայնացումն ու թվային հմտությունների զարգացման խթանման ոլորտում աշխատանքների և դրանից բխող լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը[2]: Մասնավորապես գործակալության հիմնական խնդիրներն են թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, համացանցի ոլորտների արդյունավետ կառավարումը և համակարգումը, թվայնացման գործընթացների համակարգումը, միասնական թվայնացված միջավայրի և թվային տնտեսության ձևավորման խթանումը, Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում, տնտեսության մեջ ներդրվող թվայնացման և էլեկտրոնային կառավարման համակարգերի նախագծումը, մշակումը և իրականացման գործընթացի կազմակերպումը, կիբեռանվտանգության

[1]ԱՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Արցախի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2020թ. հունվար-դեկտեմբերին (2021) //ք.Ստեփանակերտ, 2021.- էջ 33:

[2] Արցախի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր (2021) //ք.Ստեփանակերտ, 15 (435), 2021.- էջ 64:

բնագավառում Արցախի Հանրապետության շահերի պաշտպանությունը և այլն[1]: Պետական կառավարման շատ ոլորտներ դեռ թվայնացված չեն: Բազմաթիվ պետական ծառայություններ տրամադրվում են թղթային ձևով: Պետական ծառայությունների միասնական հարթակի ստեղծումը կմատուցի քաղաքացուն և բիզնեսին ամբողջական թվային ծառայությունների փաթեթը: Կարևորվում է էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը և դրանց գործունեության ապահովումը: Հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանում քաղաքացիների և իրավաբանական անձանց համար էլեկտրոնային հարթակների միջոցով հանրային ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով պետական ծրագրերից բխող միջոցառումների իրականացումը:

Վերլուծություն

Հոդվածի նպատակը Արցախի տնտեսության թվայնացման և զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծման հիմնավորումն է, որպես պետության արդիականացման հիմնական միջավայր և տնտեսական մրցակցության բարձրացում:

Թվային տնտեսությունը հանդիսանում է աճի և զարգացման հիմնական շարժիչներից: Նա կարող է բարձրացնել տնտեսության տարբեր հատվածների մրցունակությունը, տրամադրել բիզնեսին և ձեռներեցներին նոր հնարավորություններ:

Թվային տնտեսությունը բնութագրվում է նոր հնարավորություններով, որոնք դրական են արտացոլվում մարդկանց կյանքի վրա:

Երկիրները ձգտում են օգտագործել թվային հնարավորությունները, ակնկալելով, որ այդ ամենը կնպաստի տնտեսական զարգացմանը: Թվային զարգացման ռազմավարությունը պետք է ընդգրկի ներդրումների թվային ենթակառուցվածքներում:

Հետազոտման արդյունքները կայանում են թվային տնտեսության զարգացման ուղղությունների հստակեցման և արդյունքի հասնելու համար քայլերի հետևականորեն իրականացման մեջ:

Առաջարկվում է ստեղծել թվային տնտեսության իրավական կարգավորման համակարգ, տվյալների փոխանցման, մշակման և պահպանման մրցունակ ենթակառուցվածքներ, ապահովել կադրերի պատրաստումը, տեղեկատվական անվտանգությունը, տնտեսության գերակա ճյուղերի և սոցիալական ոլորտի վերափոխումը ներառյալ առողջապահությունը, կրթությունը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածքները, ֆինանսական ծառայությունները, թվայնացման լուծումների միջոցով: Խնդիր է դրվել ուսումնասիրել տնտեսության թվայնացման ներկա վիճակը և արդյունավետության բարձրացման հետ կապված հիմնախնդիրները:

Առաջարկվում են տնտեսության թվայնացման միջոցառումների մշակում և իրականացում: Հատկապես ընդգծելով տնտեսության և հասարակության թվայնացման ռազմավարության և ծրագրերի մշակման առաջնահերթությունը՝ համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ: Առանձնացվում են տնտեսության թվայնացման դրական և բացասական կողմերը: Կարևորվում է թվային հարթակների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը:

[1] https://minjustnkr.am/nkr/documents/%D0%90HPT-15(435)-25-06-21.pdf

Թվային տնտեսության զարգացման համար անհրաժեշտ են թվային հարթակների և էկոհամակարգերի ձևավորում և զարգացում, թվային նորարարությունների ստեղծման և շրջանառության համար նպաստավոր միջավայր, ինչպես նաև թվային ստարտափներին և այլ նախագծերին աջակցություն:

Ապրանքների և ծառայությունների շուկայի թվային փոխակերպումը կհանգեցնի առևտրային ընթացակարգերի զգալի պարզեցմանը՝ թվային ձևին անցնելու միջոցով, էլեկտրոնային առևտրի ակտիվ օգտագործմանը:

Թվային տեխնոլոգիաների ոլորտում տնտեսության թվային տեսքի ձևավորման գործում մեծ է պետության դերը: Մասնավորապես անհրաժեշտ է մշակել տնտեսության և հասարակության թվայնացման ռազմավարություն և ծրագրեր, որոնց իրականացումը տարբեր պետությունների համար յուրահատուկ բնույթ է կրում: Թվային տեխնոլոգիաների անցումը աջակցում է երկրի տնտեսության մրցունակության ամրապնդմանը:

Տնտեսության թվային փոխակերպումն իր մեջ ներառում է նորմատիվ փաստաթղթերի նախապատրաստումը և ընունումը:

Հատուկ է տեղեկատվական համակարգի հնարավորությունների ընդլայնումը և դրա հիման վրա ձևավորված թվային հարթակի զարգացումը, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների համար անհրաժեշտ ծառայությունների ստեղծումը, տնտեսավարող սուբյեկտների, քաղաքացիների և բիզնես ցանցերի համար թվային ծառայությունների հասանելիության ապահովումը, նորմատիվ տեղեկատվական տեղեկությունների համակարգի ձևավորման համար պայմանների ստեղծումը:

Թվային ենթակառուցվածքի զարգացման և թվային գործընթացների պաշտպանվածության իրականացումն է ենթակառուցվածքների կայունության, անընդհատության և հուսալիության ապահովումը: Արցախի Հանրապետությունում լայն տարածում է ստանում ֆինանսական համակարգի թվայնացումը՝ ինտերնետ-բանկինգը, էլեկտրոնային վճարումները և այլն: Վարկերի ձևակերպումը և վճարումները հասանելի են դառնում համացանցի կամ շարժական կապի միջոցով: Արդեն իսկ սովարական է դարձել համացանցով հարկերի վճարումը: Այդ ամենը հասանելի է ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում՝ համացանցի առկայության դեպքում:

Եզրակացություն

Թվայնացման ռազմավարության հիմքում պետք է լինեն պետությունը, տնտեսությունը և հասարակությունը: Թվային տեխնոլոգիաների կիրառումը թույլ կտա բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը, նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: Պետք է ստեղծել պետական մարմին, որը կզբաղվի թվայնացման քաղաքականության մշակմամբ, օրենսդրական բարեփոխումների իրականացմամբ, թվայնացման լուծումների համար ստանդարտների և պահանջների մշակմամբ, կսահմանի կիբեռանվտանգության նվազագույն պահանջները և կհետևի դրանց կատարմանը:

Պետք է իրականացնել նաև միջոցառումներ մասնավոր հատվածում իրազեկվածության բարձրացման նպատակով:

Տնտեսության զարգացման կարևոր հիմնախնդիրներից է որակավորված կադրերի բացակայությունը: Անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված որակյալ կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը, կազմակերպել դասընթացներ

նոր թվային տեխնոլոգիաների, ներդրված էլեկտրոնային ծառայությունների և դրանց անվտանգ օգտագործման վերաբերյալ: Արդյունքում, կրթական ծրագրերի միջոցով կբարձրացվի բնակչության թվային հմտությունների մակարդակը:

Կրթական տեխնոլոգիաների ներդրման և թվային գրագիտության ձևավորման նպատակով առանցքային է հանրակրթական համակարգում այս ուղղությամբ խորացված դասընթացների ներդնումը:

Տնտեսության թվայնացումը կնպաստի նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի լայնաշերտ ու բարձրորակ ինտերնետ կապով և պետական թվային ծառայությունների հասանելիությամբ ապահովմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Tapscott D. The Digital Economy: Promise and Peril in the Age of Networked Intelligence (1994) //Paperback, 1994.-p. 368.
2. ԱՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Արցախի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-դեկտեմբերին (2019) //ք.Ստեփանակերտ, 2019.- էջ 32:
3. http://statnkr.am/files/publications/2020/Doklad_2020_hunvar_dektember/1_2_5kap% 20(32-33).pdf
4. ԱՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Արցախի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2020թ. հունվար-դեկտեմբերին (2021) //ք.Ստեփանակերտ, 2021.- էջ 33:
5. Արցախի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր (2021) //ք.Ստեփանակերտ, 15 (435), 2021.- էջ 64:
6. https://minjustnkr.am/nkr/documents/%D0%90HPT-15(435)-25-06-21.pdf

РЕЗЮМЕ
НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ЦИФРОВОЙ ЭКОНОМИКИ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Мирзоян Артур

Главный специалист Министерства финансов и экономики РА

Степанакерт, Республика Арцах

Мирзоян Сильва

Старший преподаватель Шушинского технологического университета

Степанакерт, Республика Арцах

Цифровизация экономик получает широкое распространение в мире. Все это требует осуществления действий для того, чтобы Республика Арцах не отставала от цифровизации мировой экономики. Цифровая экономика является одним из основных двигателей роста и развития. Она может повысить конкурентоспособность различных секторов экономики, предоставить бизнесу и предпринимателям новые возможности. Цифровая экономика

характеризуется новыми возможностями, положительно влияющими на жизнь людей. Страны стремятся воспользоваться преимуществами цифровых технологий, надеясь, что все это будет способствовать экономическому развитию. Стратегия цифрового развития должна включать инвестиции в цифровую инфраструктуру. Цифровизация экономики способствует также быстрому преодолению экономических последствий коронавируса и становится более актуальной в период активизации эпидемии.

В статье рассматриваются важные для развития сферы вопросы и направления развития. Особо отмечена необходимость разработки и реализации стратегии и программ цифровизации экономики с привлечением общества. Проанализировано нынешнее состояние цифровизации экономики и вопросы, связанные с повышением ее эффективности.

Ключевые слова*:* цифровая экономика, цифровые технологии, цифровые инфраструктуры, цифровые инновации, цифровая платформа, цифровая экосистема, интернет-банкинг.

SUMMARY
DIRECTIONS OF DEVELOPMENT OF DIGITAL ECONOMY IN THE REPUBLIC OF ARTSAKH

Mirzoyan Arthur
Chief Specialist of the Ministry of Finance and Economy of the Republic of Artsakh
Stepanakert, Republic of Artsakh

Mirzoyan Silva
Shushi University of Technology, Senior Lecturer
Stepanakert, Republic of Artsakh

The digitalization of economies is becoming widespread in the world. All this requires actions to ensure that the Republic of Artsakh does not lag behind the digitalization of the world economy. The digital economy is one of the main engines of growth and development. It can increase the competitiveness of various sectors of the economy, provide businesses and entrepreneurs with new opportunities. The digital economy is characterized by new opportunities that have a positive impact on people's lives. Countries are striving to take advantage of digital technologies, hoping that all this will contribute to economic development. The digital development strategy should include investments in digital infrastructure. Digitalization of the economy also contributes to the rapid overcoming of the economic consequences of the coronavirus and becomes more relevant during the intensification of the epidemic.

The article discusses issues and directions of development that are important for the development of the sphere. The need to develop and implement a strategy and programs for the digitalization of the economy with the involvement of society was especially noted. The current state of the digitalization of the economy and issues related to increasing efficiency are analyzed.

Key words: digital economy, digital technologies, digital infrastructures, digital innovations, digital platform, digital ecosystem, Internet banking.